Եվ նամակ գրեց հայերին խիստ օգտակար: Քաղաքում ճարտար լեզվով, ճոխաբան մի քահանա կար, նրան ընտրեցին, որ գնա: Մեծ քանակով դրամ հավաքեցին և տվին նրան, նա առավ խանի նամակը և գնաց: Հասավ Սպահան, նախ գնաց խոջա Սաֆրազի մոտ, որովհետև նա Ջուղայի ավագն էր, իսկ նա քահանային տարավ եպարքոսի մոտ, որին կոչում էին Սարուքաղի. նրան ցույց տվին խանի նամակը:

Եվ երբ կարդաց, ասաց՝ քահանա, դու աղերսագիր գրիր, ինչպես որ հասկանում ես և տուր խոջային խանի նամակի հետ: Երբ գնանք թագավորի մոտ, այնտեղ (խոջան) կտա ինձ, ես ցույց կտամ շահին: Եվ լալագին դեմքով մի աղերսագիր գրեց, տվեց խոջային: Պայմանավորված օրը տվեց եպարքոսին, իսկ նա շահին տվեց երկու թղթերն էլ: Այստեղ տես Աստծու ողորմածությունը: Ինչպես որ Արտաշեսի սիրտը քաղցրացավ Մուրքքեի հանդեպ*, այդպես էլ Աբաս թագավորի սիրտը՝ քահանայի հանդեպ: Շահը ասաց՝ ինձ մոտ բերեք աղերսագրի տիրոջը: Եվ կանչեցին նրան: Քահանան գնաց, ընկավ երեսն ի վայր և սողեսող գնաց, համբուրեց արքայի ոտքերը ու վեր կացավ: Արքան հարցրեց՝ դո՞ւ ես գրել այս աղերսագիրը: Քահանան ասաց՝ այո, տեր իմ արքա: Շահն ասաց՝ ասա նաև բերանացի, որպեսզի իմանամ: Եվ նա պատմեց ամենը: Իսկ շահը ունկնդրած լսում էր: Ապա կանչեց մի գրագիր և ասաց՝ գրիր խանին և Արտաբիլի մոլլաներին, թե դուք, որ քանդել եք քրիստոնյաների աղոթանոցը և իմ պապերի հիշատակը ջնջել եք, ձեր հանցանքը մեծ է ու արժանի մահվան: Սակայն այս անգամ թող ներվի ձեզ, քանզի Շեյխսաֆու ծառաներն եք: Բայց հրաման է մեր թագավորության կողմից, որ դուք ինքներդ ձեր դրամով, բանվորներով, արհեստավորներով, ծառաներով հայերի վերակացությամբ շինեք նրանց եկեղեցին, ինչպես իրենք են կամենում, նույնպես թող շինեն թե մեծ, թե փոքր, որպեսզի իմ տոհմի հիշատակը չկորչի, թող աղոթեն այնտեղ Շեյխսաֆիի օջախի համար:

Թուղթը կնքեց, տվեց քահանային և ասաց՝ դե գնա: Քահանան ելավ հետ-հետ գնաց: Երբ մի փոքր հեռացավ, (շահը) հետ դարձրեց և ասաց՝ գիտեմ, որ ճանապարհի հացափող չունես: Գանձապետին ասաց՝ դրան տասներկու հազար դիան տուր, որ ուտելիքի փող անի ճանապարհի իր համար, ապա ասում է՝ շտապիր, գնա:

Քահանան ելավ ու գնաց Արտաբիլ և խանին ցույց տվեց հրամանը: Երբ խանը կարդաց հրամանը, տեսավ, որ խիստ էր գրված: Կանչեց շեյխին և գրակարդացներին և կարդաց թագավորի հրամանը: Նաև ցույց տվեց շահի նամակը, որ գրված էր, թե դուք այդ անելով դարձաք թշնամի Շեյխսաֆու օջախին:

Երբ այս լսեցին, ամենքն էլ ցնցվեցին: Այդ պատճառով ասացին՝ թագավորի հրամանը մեր գլուխների վրա: Իսկույն կազմեցին վարպետներին, որմնադիրին, աղյուսարարներին և հայերին հրամայեցին, որ տեղը չափեն, ապա սկսեցին մեծամեծ անտաշ քարեր թափել հիմքերը, իսկ նրա վրա շարեցին թրծված աղյուսներ: Գործավորների բազմության պատճառով շտապ ավարտվեց աղյուսաշեն հոյակապ և գեղեցկահարմար (շենքը): Երբ եկեղեցին հաստատվեց, կային երեք քահանաներ, նշանակեցին նաև մի չափազանց կարող ժամկոչ, որ ամեն գիշեր գնար քրիստոնյաների դռները և երդիկները ծեծեր, որպեսզի աղոթքի գան: Մի գիշեր, որ ուրբաթ էր, մոլլան ելավ մզկիթի տանիքը և առավոտյան աղոթքն էր գոչում, և ահա քաղաքի շները նրա հետ ոռնում էին: Երբ մոլլան լռում էր, շներն էլ էին լռում. երբ մոլլան կանչում էր, շները նույնպես ոռնում էին: Ժամկոչը լսելով շների ոռնոցը՝ ինքն իրեն ասում է՝ արդ շները մոլլայի հետ ոռնում են, ես էլ որ ոռնամ, ինչո՞վ կվնասեմ. և սկսեց բարձր ձայնով գոչել՝ օրհնյալ է Աստված, օրհնեցեք Աստծուն: Գրակարդացը (մուղրին) լսելով նրա ձայնը՝ գնաց, սուգ մտավ: Աղոթողները եկան և ասացին՝ ինչո՞ւ դադարեցրիր կանչդ: Գրակարդացը (մուղրի) ասաց՝ մեր հավատը կորավ: Մահմեդականները ասացին՝ ինչո՞ւ: Մոլլան ասաց՝ քանզի հայոց երգը այնքան բարձր հնչեց, մինչ որ մերը խափանեց:

Մոլլային առան գնացին խանի մոտ և աղմուկ բարձրացրին: Իսկ խանը կանչել տվեց երեք քահանաներին և ասաց նրանց. «Դուք այնքան լկտիացաք, որ ձեր եկեղեցին մահմեդականներին շինել տվիք, իսկ այժմ ումից հրաման առաք ժամ կանչելու: Քահանաները ասում են՝ մենք ժամկոչ չենք, ունենք մի ծառա, թերևս նա է կանչել: Խանը հրամայեց և բերին նրան: Խանն ասաց՝ դո՞ւ ես այս քաղաքի աղոթակոչը: Ժամկոչն ասաց՝ այո: Խանն ասաց՝

* Եսթեր, Զ, 8: